"ՄԵԼԻՈՐԱՑԻԱ" ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

*378834 Արարատի մարզ, գ.Հայանիստ, Հեռ. (374 10) 27-38-06, Էլ.փոստ՝ vova-tadevosyan@mail.ru*

24.03.14 № 51-ՎՌ *ի պատասխան Ձեր* ______________ №___________

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Մելիորացիա>> ՓԲԸ-ի /այսուհետ՝ ՓԲԸ/ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-Մ-3/14>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, գ. Հայանիստ, ՓԲԸ-ի շենք, թիվ 4 սենյակ, մինչև 2014թ. ապրիլի 3-ը, ժամը 11$^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Խ. Վարդանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման օրը, համարը և ժամը:

Հայտերը կբացվեն ՓԲԸ-ի շենքում, թիվ 4 սենյակում, Արարատի մարզ, գ. Հայանիստ հասցեում, ապրիլի 3-ին ժամը 11$^{00}$-ին: Գնային առաջարկը երկու կամ ավելի արժույթներով ներկայացնելու դեպքում դրանք կհամեմատվեն հայտերի բացման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Գնման առարկա է հանդիսանում ՓԲԸ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերումը:

ՓԲԸ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի մատակարարման (որոնք բաղկացած են 48 չափաբաժիններից), տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված) N 1, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

բ/ գնային առաջարկ (Հավելված) N 2: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

*Մասնակիցները կարող են հայտը ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես բոլոր չափաբաժինների համար: Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների: Ընդ որում յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել, ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը կներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կմերժվի: /Օրինակ, եթե մասնակիցը հայտ է ներկայացնում առաջին չափաբաժնի՝ շարժիչի յուղի համար, ապա գնային առաջարկը պետք է ներկայացվի ոչ թե մեկ լիտրի՝ այլ չորս հարյուր հիսուն լիտրի համար: Մեկ լիտրի համար հայտ ներկայացնելու դեպքում վերջինիս հայտը կմերժվի/:*

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեն է /vova-tadevosyan@mail.ru/:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի /այսուհետ Կարգ/ 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալները:

ՏՆՕՐԵՆ Վ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ